



Ի ՏԱՐԻ, ԹԻԻ 7

1862

ՅԱՆՎԱՐ 1

ՀԱՅԱԴՐ

Հրատից ԺԵ — 21 Յուլիս

Ստեփաննոս Սիւնեցի և Սահակդուխտ

Յիրաւի հրատ հրեղէն է ամիսն
 Հրատից կամ Հրորտից. արեւն Ղուծ
 աստեղատան մէջ խարտիշագոյն ա-
 ռիւծու բաշերուն նման դեղին ճառա-
 փայթներով կու տոչորէ արտերը, ա-
 ռիւծային թաթերով կու լկէ զեր-
 կիր: Հայկայ հրաձօճակ աստղն այլ
 (Շնիկն) սկսած է բարձրանալ. ամէն
 տեղ տաք, ամէն բան կրակ: Ուր են
 այն Հայոց ձիւնեղէն սառնապատ լե-
 ղինքն. անոր բեռային կերպարանքն՝
 հիմա յայրեցեալ գօտի փոխուեր է:
 Երկու հակադէմ կլիմայք կ'երեւան
 մեր երկրին մէջ. սաստիկ ցրտութիւն
 և սաստիկ տաքութիւն: Ի՞նչպէս բնա-
 կերու է ասանկ երկրի վրայ: ... Սեր
 հարքն, և մեր եղբարքն անգամ, շատ
 տեղ երկրի վրայ չէին բնակեր ուրիշ
 աշխարհաց բնակչաց նման, գոնէ տար-

ւոյն երկու ծայրայեղ յեղանակաց ա-
 տեն. այլ անկէ վար կամ անկէ վեր.
 այսինքն, ձմեռն՝ երկրին երեսայտակ,
 կէս գետնափոր տանց մէջ, նման իմն
 հողաթմբի կենդանեաց. իսկ ամառն՝
 այլ աւելի վայելչապէս, երկրիս սովո-
 րական երեսէն վեր, օդասահման կեն-
 դանեաց, թռչնոց հետ, կամ լերանց և
 սարից վրայ, կամ ծառոց և ձեռակերտ
 բարձրաւանդակաց վրայ, ձողերու ցի-
 ցերու վրայ հաստատելով դարպասներ
 և ննջարաններ: Բոնք են Հովիւ և Հո-
 վանոյք և Հովեղ Գեղիքն Հայոց. որ լուր-
 գոմայ օրերէն՝ ի վեր մինչև ցայսօր սի-
 րելի և բաղձալի են ի Հայաստան և
 Հայաստանի եզերքը բնակող ազգաց.
 և ինչ որ այսօր Ուուսաց և (Սմա-
 նեանց իշխանաւորքն և զօրապետք կ'ը-
 նեն երկրին բնիկ ժողովրդեան հետ՝

անոր բարձրաւանդակաց վրայ ամառ-
նանալով, զնոյն 4000 տարի առաջ այլ
Բաբելոնի և Վինուէի թագաւորք և
իշխանք, մեր թագաւորաց, իշխանաց և
աւանդաց հետ... Որչափ այլադէմ,
այլախօս, այլաւիամ ժողովուրդք, զօրք
և տեարք ամառնացան բնակեցան հոն
'ի հովս հայոց, և անցան գնացին շա-
տերն անդարձ, և ամէն տարի երկիրն
դարձեալ նոյնպէս իր ամարանոցը կու
պատրաստէ. նոյնպէս կու բուսնին
ծառք և ծաղկունք, նոյնպէս կու գան
ծիծռունք և կուռնկք. նոյն հովք և
նոյն հովանիք հայոց. և նոյն... այո,
ըսենք կիսամաղձիկ կրիւք, և նոյն սե-
րունդք բնիկ նախնեաց՝ դեռ ևս վկայք
երթեկի այլազգեաց, և վայելողք հո-
վոյն և զովոյն: () Երհնեալ ըլլան հովքն
հայոց, հովք հայրենեաց, զոր 'ի միւի-
թար և 'ի մուացումն երկայն ձմերան՝
պարգևեց մեզ դրախտին տնկողն, Բ-
րարչապետն. օրհնեալ հովն և զովն՝ որ 'ի
ցած ձորերէ և դաշտերէ վեր կանչելով
ժողովելով զհայաստանեայս՝ երկիրն
այն կոնաձև կամ տախտաձև բարձանց
վրայ, իբրև 'ի վերայ սեղանոյ բնու-
թեան, բնաբար այլ կ'ազդէին անոնց՝
արարչագործ մեծութիւնը, վսեմու-
թիւնը, գեղեցկութիւնը, զանազանու-
թիւնը: Առողջանային կ'ուժովնային
կու զուարթանային միտք և մարմին.
Թագաւորն կու հպարտանար, և ոչ
անիրաւէր, որ Բստուած իր իշխանու-
թեան տակ ձգեր է այն հովասուն սահ-
մանները, և անոնց աշխոյժ ծնունդքը.
զինուորք և ազատազունք հոն կու զօ-
րացնէին, թեթևցնէին, ճկուն և տու-
կուն կ'ընէին իրենց կտրիճ անձինքը,
սարէ սար այծեմանց և ցուց ետեւէ
ընկնալով յորս. հովիւք՝ հոն կու ծա-
ւալէին երկիրն և երկրագործութեան
կենդանի հարստութիւնը և օգնու-
թիւնը. արուեստաւորք և աւանդէ՝ օ-
րական և ամսական աշխատութիւննե-
րը հոն կու հանգչեցնէին. բանասէրք
և հոգեսէրք անգամ, պաշտօնեայք
Տրի և Վրիստոսի, պարապողք ուս-
մանց և կրօնից, հոն այն հովերուն մէջ

գոնէ ժամ ժամ զովնալով, աւելի յըս-
տակ մտօք և պայծառ տեսութեամբ
կ'ելլէին բարձրագոյն տեղունք, 'ի
կաճառս հոգեւորաց 'ի պարս բանաս-
տեղծից, յերամս հրեշտակաց. և իրենց
հոգեշունչ համբարձինները և () Երհնեալ
թիւնները երգելով կ'իջնէին, եկեղեց-
ւոյն Շարականը և Սանրուսմունքը՝
նոր երգերով նոր եղանակով հարստա-
ցնելու. և ամառնային հովանոցներու
ազգած երկնախառն հոգին և շունչն՝
զարմանալի այլակերպութեամբ ինչը-
ւան խորագոյն ձմերան խորանիստ տա-
ճարաց մէջ հնչեցնելու, և ձայներնին
հասցնելու յետ հազար տարիներու՝
մինչև մեր օրերը: () Երհնեալ ուրեմն
միանգամ այլ՝ այն երկնաշունչ հովքն
հայոց, որ այսպէս հոգեւորեցին մեր
հարքը, և անոնց յարգարեալ շնչովն
զմեզ այլ կու հոգեւորեն այսօր...:

Եւ, հայկակ, եւնենք այսօր մենք
այլ այն բարձրանալ տեղերուն, հայ-
րենեաց դարերուն, հայոց հովերուն,
Սիւնեաց զովերուն վրայ. այն տե-
ղունքը՝ ուր Բաբելի աղատեալ 'ի
պանդխտութենէ Պարսից՝ ուրախու-
թեամբ որսի կ'ելնէր, « Ինդալով խա-
ղալով 'ի վրայ սովորական թատերացն
, և խնջոյից խրախարանացն, 'ի լերինս
, որսասուն և բազմաջողիւր վայրացն, 'ի
, լերինս Սիւնեացն », Բայ խաղէն
խնտումէն և որսէն աւելի պիտի ախոր-
ժիս անշուշտ, երբ քիչ մը յօգնութիւն
աւնելով, և աչքերդ բնութեան բարձ-
րագլուխ և խորածոց գեղեցկութեանց
վրայ պտըտցնելով՝ թողուս միտքդ վեր
վար ժուռ գալու, և յանկարծ լսես
վերը յիշեալ պաշտօնէից մէկուն ձայնն
որ իր աշտիճանին յարմար և իր բնա-
տուր շնորհաց համեմատ՝ բարձրագոյն
մտածութեանց մէջ թռտելով վերա-
նալով, Սիւնեաց Սիւնի լեռնէն կու
սլանայ Երուսաղէմի Սիւնը, այնկէ
այլ այնդին, հեռու խոր կ'իջնէ մինչև
յափունս Վարմիր Նոյվուն. հոն կու
պտըտի մեծ նախամարգարէին հետ,
կու դիտէ ծովափտուր գաւազանին հը-
րաչքը, կու լսէ անոր հրաշալի () Երհ-

նեսցուք, և իր բարձր հանձարոյն վրայ վստահացեալ՝ աւելի վեհագոյն անձին (Վրիստոսի) շնորհօք, կու փորձէ աւելի հոգիացընել հայացընել այն հրաշալի օրհներգը, և սլանալով իր հայկական հովոց վրայ՝ կու սկսի նուագել:

Յաղթական քեզ օրհնութիւնք, Տէր. որ զխորոց ծովուն հերձեր զջուրն. զի ՚ի նմա զբռնաւորին ջաղխեցեր ըզգլուխ. և զարգելեալսն՝ ՚ի ձեռն խաչի քո վերածեր ՚ի կեանս:

Կամաւոր մահուամբ ՚ի քէն, Տէր, արձակեցեր զհոգի զօրութեան, ՚ի մէջ մահու զմահ աւերեալ վանեցեր. և զարգելեալսն՝ ՚ի ձեռն խաչի քո վերածեր ՚ի կեանս:

Վայեցարուք ՚ի բարբառ մարգարէին և ՚ի պատգամս կենդանիս. որ քարոզեաց մեզ զցօղն կենաց ՚ի յերկնից:

Օ իջումն քո, Վրիստոս, գուշակեաց մեզ մարգարէն. և զկամաւոր չարչարանս խաչին գոչեր ասելով, տարածեաց զթևս իւր ընկալաւ զնա, և բարձեալ բերէ ՚ի փրկութիւն աշխարհի:

յափս հարէք ամենայն հեթանոսք և օրհնեցէք զՆստուած, զի հուրն Նստուած բանն մարմնացաւ ՚ի կուսէն, աւերեաց զգոթոս և զգօրութիւն մահու ելոյծ:

Ինկալեալք զբաժակն ուրախութե յայգւոյն անմահութեան սրբոց առաքելոցն, որք ընդհանուր ընթացան ընդ տիեզերս, լուսաւորեցին հրաւիրելով յերկնից յարքայութիւն:

Յաւուր վրիժուց հատուցման ամպարշտաց՝ վերածիցես զմեզ ընդ հոգեղինացն դասն, ՚ի տեղի անկելոց հրեշտակաց բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին:

Իշայ զսքանչելի տնօրէնութեան քո զլուր, քանզի յերկնից խոնարհեալ մարմնացար ՚ի սուրբ կուսէն և խաչեցար ընդ աւազակսն, և զարհուրեալ հիացայ ընդ քո ընդ անհաս մարգասիրութիւնդ:

Օ իշխանաբար զյարութիւնդ գուշակեաց մեզ մարգարէն. ասէ, ելեր դու ՚ի կառս քո. հեծելութիւնդ քո, Վրիստոս, փրկութիւն եղև յերանելդ քո:

Երեւցար ՚ի փրկել զարարածս ՚ի մահուանէ, և դո՛ւք հիացեալ սասանեցան ՚ի յահէ ամենազօր փառաց քոց:

Ուր եմք, հայկակ. յԱլիւմպոս համբուսի, թէ ՚ի Պառնաս Պիոդարու. — բարձրագոյն քան զնոսս. հաւասար Սինայի, ՚ի Սիոնի Սիւնեաց: Եւ աշխարհիս գաւառաց վեհագոյնն՝ Սայոց կամ Եղեգեաց ձոր՝ յափշտակեց զմեզ իր բարձրագիր հովոցաց վրայ, որոց միջէն կարկաջէ փրփրայ սփռուի, կ'իջնէ բաղմամտակ գետն Երբայ, արևելքէ յարևմուտք, հայաստանի մեծ դայեկին ծոցը, յԱրասիս. գրեթէ գաւառին մէջ-տեղուանքն Երբայի աջ (հիւսիսային) կողմը և քիչ հեռու ՚ի գետափանցն՝ է Մոն կամ Մոդան աւան կամ քաղաքագիւղ, որ և մինչև հիմա Սոդ անուամբ ծանօթ է. անոր քովէն կ'իջնէ Ասփառն կամ Ասփառն աղբիւրն զովաջուր յԱրբա. այս երկու տեղեաց միջոցն և մօտերն են օդագնաց բարձրաւանդակք, հովոցք Սոդան. և ահա այն հովոցներու վրայ հանգչողաց մէկն է հեղինակ այս սրբազան և վսեմական օրհներգութեա, և ինքն իսկ սրբազան և վսեմ անձն, բոլոր Սիւնեաց երկայնաչարքահանայ ապետաց մէջ (որք լուսաւորչայ օրէն մինչև ՚ի մեր օրերը յաջորդած են 90 կամ 100 թուով) ամենէն հռչակաւորն իմաստութեամբ, և թերևս բոլոր մեր բանասիրաց և բանահիւսից մէջ ամենէն վսեմախօսն, վասն որոյ և կոչուած Բերդու և Իսապասէր, ինքն նախագահ եպիսկոպոսն Սիւնեաց ՍՏԵՓԱՆ ՆՈՍ: Որ և այսօր (21 յուլիսի, յամի Տեառն 736) ցորեկուան տաքութեան հետ՝ հոգւոյ և մտաց տաքութեամբք այլ նեղեալ՝ կու գայ իբրև մարդ սոսկական զովութիւն փնտռելու ՚ի բնու-

թեհէ և ՚ի միայնութեանէ : Եթէ
յանդգնինք մենք այլ միայնաբար դի-
տելու զնա, ահա կու տեսնեմք՝ որ իբ-
րև տեղեակ այս տեղերուս՝ անսովոր և
անմարդաձայն ճամբով մը կու գայ,
Լազ աղբեր ընթացքը կու բռնէ, ա-
նոր հովանաւոր ափանցը ընթացիւք .
քալուածքն երազ, հաստատ և իբր
սպառնալից . նոյնը կարծել տան դէմքն
այլ, որոյ սեւածել շրջանակին վրայ
հազիւ քիչ մը արծաթագոյն խառնը-
ւածք կ'երևնայ . բարձրակամար յօնքն
քիչ մը իրար մօտեցեր են լայնաբոլոր
ճակտին կեդրոնին տակ, երեսքն չոր
կարմրութեամբ մը կու վառին . բայց
քանի կու յառաջէ՝ դէմքն կու թուա-
նան, հանդարտութիւնն կ'աւելնայ,
կարծես թէ ոտքին տակ ցատկոտող մո-
րեխայ, գլխուն վրայ կախուած ճպրանց
աղաչական ճռճումանց ողորմելով, և կա-
նաչ հովանւոյն պատառուածոց միջէն ե-
րեցած կտոր կտոր երկնից կապոյտներէն
խրատուած՝ կռնճած ճակատը պարզե-
լով, խորշափուն տերեւոց միջէն սուլու-
լիկ հովերու շնչմամբքն սրտաբացուե-
լով, և ջրոյն մանրաբլբլ կարկաջանօք
հրաւիրուած, քալուածքը կու ծանրա-
ցընէ, կու դադրի, կու նայի ծառոց և
ալեաց վրայ . կու ձայնէ իր փոքրաւորաց
և սպասաւորաց յառաջ գալ, և հոն
իր վրանը կանգնել և հեռանալ . և երբ
զինքը իր ցանկալի առանձնութեանը
մէջ կու գտնէ, վերարկուն վար դնե-
լով, կ'երթայ աղբիւրին յստակ հոսա-
նաց տակ տաքութիւնը բժշկելու . կու
զովանայ, կու ջնջուի, և աղբերափանց
մօտ յարմար լայնամիջոց ուռենի ծառ
մը տեսնելով՝ կ'առնու իր փայտաշէն
հանգստանոցը, ամառուան հովոցի ան-
կողինը, կու հաստատէ այն կանաչ-վա-
րագոյր հովանեաց տակ, և զԼստուած
օրհնելով՝ անոր բնաբուն բնազարդ տա-
ճարին մէջ, հանգիստն ՚ի քուն կու փո-
խուի, մտածութիւնքն յերազ և ՚ի տե-
ողիս . . . Լքդեօք կու տեսնէր քիչ մը
վերջը ըլլալիքն այլ . երազական տե-
սիւքներէն բացայայտ ճշմարտութեան
մէջ մտնել ու մնալն առանց արթննա-

լու . . . Ո՛վ սիրալի և սոսկալի դի-
պուած, և գրեթէ աննման այսպիսի
աննման մարդու մը համար :

Բայց յառաջ քան զդիպուածն քիչ
մ'այլ ճանցիր, հայկակ, այս վեմա-
միտ մարդուս կեանքը և գործքը : Սը-
սեմ մտացն յարմար կամ թէ առիթ
իսկ այնպիսի մտաց՝ վեմական ծագումն
ունէր . հայոց մայրաքաղաքին (ուր
կու նստէր կաթողիկոսն և Լրաբայի
ոստիկանն աշխարհատեսուչ, աւագե-
րեցն (Սահակ) որ հետ կաթողիկոսին
նախապատիւ կրնայ ըսուիլ Վռնայե-
կեղեցեաց պաշտօնէից մէջ, ընծայեց
յաշխարհ զՍտեփաննոս, իբրև Օ ա-
բարիա մը Լստուծոյ սրբագոյն սեղա-
նոյն խունկ ածելու ատեն՝ իրմէ ար-
ժանաւոր քահանայացու զաւակ մը
մաղթելով և ընդունելով, անոր Յով-
հաննէսին նման՝ զսա, որ արդարև ա-
նոր պէս այլ վախճան մ'ունեցաւ : Լ-
ւագերեց հայրն՝ յայտնի է որ իր որ-
դին առաջին տարիներէն սկսաւ վար-
ժեցնել և կրթել ուսմանց և եկեղե-
ցական պաշտամանց, որոց աւելի յար-
մար և վեհագոյն վարժարան մ'այլ
չէր կրնար գտնել քան զնոյն իսկ հայ-
ոց կաթողիկոսարանը, ուր եկեղեցւոյ
ուխտին համար մասնաւոր ուսումնարան
մը ունէին մեր հայրապետքն, որոց ա-
թողը կու նստէր այն ատեն Տէր Սա-
հակ, ազնուական, միանգամայն և բա-
նավարժ բանաստեղծ անձն, որպէս
վկայեն իր գրչէն մնացեալ քանի մը
ճառք և շարականք . անշուշտ ճանցաւ
հանճարաւոր կաթողիկոսն իր հանճա-
րեղ համբակը, և յանձնեց մասնաւոր
խնամոց վարժապետաց : Որոցմէ աւելի
ուսումնասէր գտուելով աշակերտն, երբ
պատանեկութեան տարիքն հասաւ՝ ըն-
գոհանալով այն տեղ սովորածէն կամ
սովորեցնողներէն, աւելի ճարտար անձ
կու փնտռէր : Լսն ատեններն (ի վերջ
Լսգարու) մեծ համբաւ հաներ էր Սե-
ւանայ ծովուն հարաւակողմը նոր հաս-
տատուած վանք մը, որ իր վանականաց
հագած ոչխարեղէն մորթոյն անուամբ՝
Մաթեհայ կամ Մաթեհոյ կոչեցաւ որոյ

առաջնորդն Սողոմոն՝ հարանց հայր
անուանեալ, թէ ճգնողական վարուք
և թէ իմաստութեամբն ամենուն ծա-
նօթ և հռչակեալ էր, մանաւանդ երբ
'ի սկիզբն ի դարու հրատարակեց
Տոմարն գիրքը, հաւաքումն վարուց
սրբոց և ճառից վասն տօնից: Ըստ
սուրբ և գիտուն անձինքով այլ առա-
քինութեամբ և ուսումնասիրութեամբ
վարժելով ինչ որ կրնար մէկն հօն սով-
որիլ, սկսաւ անկէ այլ բարձրագոյն տեղ
խնդրել. գնաց երկու դարէ 'ի վեր
պանծալի և հայաստանի մէջ ամենէն
հռչակաւոր ուսումնարանը, Սիւնեաց
վարդապետարանն. որ ըստ պատմին
“Վլուխ էր ամենայն գիտնոց հայոց,
և պայծառացեալ դպրոցքն որ 'ի նմա.
քանզի որպէս լ'թենացիքն 'ի մէջ
հռոմոց և Յունաց ճիսացեալ էին և
մայր իմաստից կոչեցեալ... այսպէս և
սորա 'ի տանս լ'արգոմայ յաշխարհիս
հայոց”: Եպիսկոպոսն Սիւնեաց Սով-
սէս ճանցաւ մէկէն իր մեծարելի հիւ-
րը, սիրով ընդունեցաւ, և անոր սուր
և անյագ մտաց հրամեց տալ ու վար-
ժեցնել ինչչափ որ իր ամենէն գիտուն
վարդապետքն գիտէին. որոց քիչ ա-
տենէն հաւասարեցաւ և գերազանցեց,
և սուրբ աստիճաններն այլ առնելով
անցաւ 'ի կարգ վարդապետայն, թէ
և դեռ նորահաս երիտասարդ էր տար-
ւօք. և հրամանաւ եպիսկոպոսին սկսաւ
վարդապետել, և դաս տալ այն անուա-
նի վարժարանին մէջ, որոյ արժանաւոր
վարդապետքն չերդող և հոգար կ'ը-
սուէին: Երեւի թէ այս ժամանակ ոչ
միայն “Բերնով մեկնէր զաստուածայ-
ն գիրս աշակերտելոցն 'ի վարժարա-
նին”, այլ և գրով աւանդեց սուրբ գրոց
մեծ մասին մեկնութիւնը, համառօտ
բայց իմաստալից և քաջադատ. սրոյմէ
մնացեալք և յիշեալքն են Սեփու-
գոյ ծննդոց, Առաջաց, Յովբայ, Դա-
նիէլի, Եղիշէի, Նորից Աւետարանաց,
Յովսէփի Բղթայն, և զատ 'ի Ս. Գրոց՝
նաև եկեղեցական գրեանց, ինչպէս
Փառքոց, եկեղեցական խորհրդոց և
տօնից. որոց համար շինեց և երգեց

զանազան ոճով և ձևով եղանակաւոր
երգեր, որք կ'ըսուին Կոմարդ, Սոողոմի,
Սեծ պահոց և Յինանց միջոց երգելու
համար, և շարականներ, որոց մէջ ծա-
նօթագոյնք և իր գրուածոց գլուխ գոր-
ծոց համարեալ են Առաջ օրհնութիւնս
Յարութեան, որ և մեր հայերէն դը-
պրութեան գեղեցկագոյն բերոց մէկն
են. ասոնցմէ էր մեր վերը լսածնիս այլ
“Յաղթական չեղ օրհնութիւնս”: Ըստ
մեկնութեանց մէկ մասն այլ գրեց 'ի
Դուին 'ի կաթողիկոսարանին, եր-
կորդ անգամ հօն բնակած ատեն յետ
մահուան Սովսիսի Սիւնեաց եպիսկո-
պոսի. որ նախ քան զվախճանէն՝ ե-
պիսկոպոսարանին հոգաբարձութիւնը
իրեն յանձնեց, ինչուան որ նոր եպիս-
կոպոս դրուի. և երբ Սիւնեցիք ընտրե-
ցին զԲնանիա, Ստեփաննոս տարաւ
զնա առ կաթողիկոսն (Եղիա) և ձեռ-
նադրել տալով յուղարկեց իր աթոռը
'ի Սիւնիս. իսկ ինքն մնաց կաթողիկո-
սին քով:

Ըսն ատենները 'ի Դուին էր հայոց
իշխանապետն և սպարապետն Սմբատ
ասպետ Բիւրատեան, որ երբեմն Յու-
նաց դուռը կեցած և պատուած, կրօ-
նական և արտաքին ուսմանց այլ հե-
տամուտ և տեղեակ էր. ասոր հետ
Ստեփաննոս վեճ ունեցաւ Յունաց և
հայոց դաւանութեանց տարբերու-
թեանց վրայ, և իշխանն յաղթող ե-
լաւ, հմտութեամբ Յունաց Ս. հարց
վարդապետութիւն հարազատօրէն մէջ
բերելով, միանգամայն փիլիսոփայական
պատճառաբանութեամբ քննելով: Ի-
մացաւ Ստեփաննոս որ իմաստասիրա-
կան տրամաբանութեանց համար բա-
ւական չէր ինչուան այն ատեն սովորածն
'ի հայս, և պէտք էր աղբիւրներէն
քննել սուրբ վարդապետաց գրուածքն:
Եւ որովհետեւ Սմբատայ հետ աւ-
րուած էր՝ զաղաուկ և ծպտելով ելաւ
'ի Դունայ և գնաց 'ի Ս. Պօլիս. և
փնտռելով գտաւ հօն վարպետ Յոյնի
մաստասէր մը որ և ճգնաւորի պէս կ'աղ-
բէր 'ի միայնութեան. անոր աշակեր-
տեցաւ թէ լեզուն սովորելու և թէ փի-

լիստիայութիւն. յունարէնէն զատ լատիններէն այլ սովորեցաւ որ արեւմտեան եկեղեցւոյ Հարց վարդապետութեանն այլ տեղեկանայ: Իսկ Սմբատ դժուարելով անոր գաղտուկ երթալուն, իմացաւ ուր ըլլաին, և նախանձայուզութեամբ իմացուց կայսեր, Ստեփաննոսի ո՞վ և ինչ կարծեաց տէր ըլլաին: Կայսրն այլ, ասէ պատմին, հրաման տուաւ քննելու զՍտեփաննոս. իսկ սա իր վարպետէն խրատուած՝ ըսաւ, թէ ես ուրիշի հետ բան չունիմ, այլ պանդուխտ եմ, եկած իմ ապրուստս հոգալու և իմ բարուցս աշխատելու: Իսկ խօսքով ոչ միայն ազատութիւն գտաւ, այլ և համարձակութիւն առաւ քաղաքը գալու և Յունաց եկեղեցիները և ուսումնարանները մտնելու. մանաւանդ Ս. Սոփիայ գրատունը, ուսկի ուզած գրքերը կ'առնուր, կարգայր, կ'օրինակէր, թարգմանէր: Յետոյ Լ. թէնք այլ գնաց, հոն այլ հին իմաստասիրաց թողած համբաւոյն մնացորդը քաղելու, և նոր գրքեր քննելու: Եւ երբ դարձաւ՝ աւելի ծանօթացաւ Յունաց մեծերուն, պատրիարքարանին և արքունեաց: Հոս էր այն ատեն Ղաւիթ հայազգի իշխանազն որ հիւպատոսութեան և թագաւորական սեղանակցութեան պատին ունէր. և յունարէն լեզուն կատարեալ գիտէր: Իսոր օգնականութեամբը կամ աչքէ անցնելով՝ թարգմանեց Ստեփաննոս գանազան Ս. Հարց գրուածներ. նախ Ս. Դիմիտրի արիսպագացւոյն խրթնաբան խորիմաց գրքերն, որոյ մէջն բանիցն այլ լուծումներ կամ մեկնութիւն գրեց համառօտ. այս գործս 'ի գլուխ հանեց յամի Տեառն 712. մէկ երկու տարի ետեւ թարգմանեց Ս. Կիւրղի Պառապմանց ըսուած գիրքն և անոր զանազան իշխելն և ճառելն. — միւս տարին, 716, Ղաւիթն Գրոց մեկնութիւն մը թարգմանեց. յաջորդ տարին, 717, Ս. Գրիգորի Նիսացոյ Յաղագս Բնութեան և Կազմութեան Ժառանգանունները գրքերն. և հաւանօրէն ուրիշ գրքեր այլ, Ղաւիթի ձեռքով համարձակու-

թիւն առած կայսերական գրատունն այլ քննեց, և գտաւ ոսկետուփ մատեան մը նախնի Ս. Հարց գործոց, զոր արդէն ընդունէին Հայք. որով կայսրն այլ հաճելով այս բանիս՝ յանձնարարական գրով կամ օգնականութեամբ խաւրեց զՍտեփաննոս 'ի Հռոմ, ըստ ինչորոյ նորա, որ այն տեղի հռչակաւոր մատենադարանն քննէ. հոն գտաւ Ստեփաննոս լատիններէնէ զատ Յունաց Ս. Հարց գործոց ընտիր և հին օրինակներ, ինչպէս Ս. Լ. թանասի, Ս. Լ. պիլիանու, և Ս. Կիւրղի Գանձաց գրքերն. և հաւանօրէն ինչ որ մինչև այն ատեն հայերէն թարգմանուած չէր՝ ինքն թարգմանեց: Իսոնցմէ դուրս թարգմանեց Ս. Մեդոքի ըսուած տեսիլքն կամ դուշակութիւնքն, որ ուրիշի շինած անվաւեր գրուածք են. Ի. Լ. Կիւրղի առման պատմութիւն մը համառօտ, յորում Լիւնի առումն 1194 տարի Բրիտտոսէ առաջ կ'ըսուի: Ուրիշ շատ գրքեր այլ, կամ բնագիր կամ թարգմանած՝ հետն առած, չուղեց 'ի Հռոմայ նորէն դառնալ 'ի Ս. Պօլիս, ուր արդէն 15 տարի կեցեր էր. այլ նաւեց յԻսիա և դարձաւ 'ի հայրենիս 'ի Հայս:

Իր հեռաւորութեան 15 կամ 20 տարուան միջոց մեր աշխարհքն շատ փոփոխութիւններ տեսեր մանաւանդ թէ կրեւեր Լ. Դարբացւոյ ոստիկաններէն, Հայոց իշխանքն նուազեր էին, Լ. զիա կաթողիկոսն շատոնց վախճաներ էր, և ըստ ոմանց նաեւ իր յաջորդն՝ մեծանունն Յովհաննէս () Զնեցի, և Ղաւիթ Լ. Դամոնեցին էր կաթողիկոս, որ և մեծ պատուով ընդունեցաւ ըզՍտեփաննոս և իր բերած գրքերը. որոնցմէ զատ ունէր և նամակ մ'այլ կնքեալ, Կոստանդնուպօլսոյ պատրիարգէն Ս. Գեորգիանէն. որոյ ծանօթ ըլլալով 'ի Կոստանդնուպօլիս և շատ հեղհաւատոյ վրայ խօսելով, և յորդորուելով ևս պատրիարգէն՝ Յունաց հետ հաղորդուելու, Ստեփաննոս կու գլուշանար իր կաթողիկոսին հաւանութիւնը չպռած: Իսոր համար Ս. Գեորգի-

նոս գրեց այն հոգեւոր թուղթը «Քրիս-
տոս է խաղաղութիւն մեր», զոր և ինքն
Ստեփաննոս թարգմանեց և տուաւ
կաթողիկոսին, և անոր հրամանաւն
այլ, կ'ըսեն, գրեց պատասխանը, «Ըն-
Քրիստոսի խաղաղութիւնն առ Բերեւոյն»:
Սակայն այս պատասխանը, հիմա մեր
ձեռք եղած օրինակներուն նայելով
հեռի է 'ի խաղաղութենէ Վրիստոսի
և 'ի հոգւոյն Վերմանոսի և յիմաս-
տութենէն Ստեփաննոսի, թէ և շատք
'ի նախնեաց մերոց յանուն Ստեփան-
նոսի յիշեն, այլ եղան և երկբայողք և
օտար ձեռքի խառնուրդ ցուցնողք¹։
զոր զգօն քննող մը կրնայ ստուգել
թէ այն երկու թղթերը կարգաւորվ,
թէ Ստեփաննոսի ուրիշ գրուածները,
և թէ մանաւանդ անոր հանձարը և
Յունաց հետ այնքան կենսկցութիւնը։
Այ միայն կաթողիկոսն հայոց այլ և
իշխանք ճանչցան և պատուեցին զՍտե-
փաննոս մանաւանդ Սիւնեցիք, որոց
քով վարդապետ և ուսուցիչ եղեր էր։
և որովհետեւ իրենց եպիսկոպոսն Յով-
հան՝ յաջորդն Լնանիայի, արդէն վախ-
ճանա՞ծ էր, Ռաբգէն և Վուրդոյ իշ-
խանք Սիւնեաց խնդրեցին 'ի կաթողի-
կոսէն որ ձեռնադրէ զՍտեփաննոս ի-
րենց եպիսկոպոս։ Սկաթողիկոսն ոչ
միայն եպիսկոպոս ձեռնադրեց զնա,
այլ և 'ի պատիւ արժանեաց նորա ա-
նուանեց մարտաօլիս, և Սիւնեաց ե-
պիսկոպոսութեան աթոռը որ մինչև
այն ատեն եօթներորդ կու սեպուէր 'ի
կարգի եպիսկոպոսաց, բարձրացուց յեր-
րորդ կարգ, և Սիւնեաց աշխարհին
ուրիշ եպիսկոպոսներուն նախագահ
դրաւ զնա։

Այն տարի մը միայն կատարեց Ստե-
փաննոս իր պաշտօնը արժանապէս, թէ
հովուական այցելութեամբք և թէ քա-
րոգելով, և գրելով՝ զատ յառաջին գը-
րածներէն՝ զանազան խնդրոց վրայ ճա-
ռեր, որոցմէ հասին մեզի քանի մը հատ,
քանի մը մեկնութիւնք այլ եկեղեցւոյ
խորհրդոց և ծիսից. և մէնութիւն մը
հին Երազմէնի, զոր հաւանօրէն 'ի Սոս-

¹ Ինչպէս հռչակաւոր վարդապետն Վանական։

տանդնուպօլիս գրած է։ Արագան եր-
գոց մասն այլ այս միջոցիս երգած կ'ե-
րևի. որ ըստ ոմանց ոչ մէկ տարի՝ այլ
ուրիշ տարի քչեց, բայց կ'երևի թէ ա-
ռաջին տարիներն Սիւնեաց աթոռոյն
անտէրութեան ժամանակն են։ Սը-
քան ազնիւ և ցանկալի երգեր և այլ
գրուածներ և թարգմանութիւններ
փափաքելի և յուսալի էր այսպիսի բա-
նիքուն վսեմական անձէ մը, որ յետ
ոսկէգիր թարգմանեաց ի դարուն՝ ա-
ռաջին թարգմանիչ կրնայ ըսուիլ, մին-
չև ոմանք նոյն իսկ թարգմանեաց մէջ
կու խառնեն զինքը, կամ իր գործերը
թարգմանեաց ժամանակակից Ստե-
փաննոսի մը կ'ընծայեն, որ չէ եղած։

Վառնանք հիմա 'ի Սոգն աւան, ուր
շատ անգամ եկած էր Ստեփաննոս այ-
ցելութեան. այս տեղս նոյն ատեն շի-
նութեամբ ու հարստութեամբ նշա-
նաւոր եղած կ'երևի, քաղքի մը պէս,
և թերևս հարուստ քաղքի շնորհօք և
անշնորհութեամբք ոչ աննշան. եղծ
ու մեղծ բարուց պժգալի օրինակ և
ցուցանք մը կու յիշէ պատմութիւնն,
և անով այլ մեր պատմութիւնը կու
լռեցնէ, ցուցանք մը՝ Սեդէայ, Յեզա-
բելի, հերովդիադայ տեսակէն. ան-
պարկեշտ լկտի և յանդուգն կին մը,
հերատուկ մը, որ թերևս շատ ցածազ-
գի տնէ այլ չըլլալով, աւելի համար-
ձակութեամբ կու լրբէր իր զխէ հա-
նած երիտասարդին հետ, և գայթա-
կղութիւնն հրատարակէր։ Երբ հա-
մար արթուն եպիսկոպոսն երեք ան-
գամ եկեր խրատեր էր այդ անզգամ
զգայունը, որ չէր խրատուած. իսկ այս-
օր չորրորդ անգամ յանդիմանելով, և
անոր լրբութիւնը տեսնելով՝ հոգեւոր
իշխանութեամբն բանադրեց, Եստու-
ծոյ արդար դատաստանին և մարդ-
կան արհամարհանացը թողուց զանի-
կայ. և այն բարկութեան տաքութիւնն
էր՝ որ ցորեկուան սօթուն հետ խառ-
նուած կու ստիպէր կու տանէր զինքն
քիչ մը զովութիւն և հանգիստ փրն-
տուելու, նախ Բազական ալեաց և
վերջը Ճօճաճիւղ հովոցին վրայ։ Ար-

չօրի որ որտապօղն և նեղու թիւնն սաս-
տիկ էր եղած, այնքան այլ հանգիստն
խոր և խաղաղ եղաւ. և ո՞ գիտէ, կիս-
արթուն միտքն ինչ մեղեդեաց և
խորհրդածութեանց հետ էր, կամ հո-
գին՝ տեսեամբ՝ ուրքան հեռացեր էր
այս աշխարհքէս, երբ յանկարծ իրօք
այլ բոլորովին հեռացաւ վերացաւ ա-
կէց. և երանի թէ երեսին խաղաղա-
տած զովագին հոլուն բաբախմամբ
և ոչ դահճէ, աւելի դժնդակ հարուա-
ծով մը կտրէր շունչն: Սոսկումն և զը-
զուանք կու բերէ լսելն, թող թէ պատ-
մեւն այնպիսի անարգ և եղեռնաւոր
վրէժխնդրութիւն մը, մանաւանդ այն
պիսի կենդանիէ մը. որ կին կ'ըսուի,
որ բարութեամբն կակուղ հրեշտակ
մը կու դառնայ, չարութեամբն խոտող
սատան: Յանցաւոր և անիրաւ կինն
այն՝ ոխով լցուած ընդդէմ եպիսկոպո-
սին, ուզեց նոյն օրը դիւական դրդմամբ
սարսափելի յիշատակ մը թողուլ աշ-
խարհիս մէջ. և իմանալով անոր ուր
տեղ հանգչիլը, իր անարգ սիրոյն վրայ
պարտաւորեց հոմանին, մահու զէնքը
ձեռքը դրաւ, հանեց զնա 'ի ծառն,
յայտնի է ինչ բանի համար: Մարդն՝
թերեւս ոչ այնքան ճարպիկութենէն
որչափ վախէն դողէն կամաց կամաց վեր
ելլելով, երբ տեսաւ Ստեփաննոսի
վեմափայլ գէմքը հրաշալի հանդըս-
տեան մը մէջ, որոյ ըստ պատմելին՝ «Իբր
զբոց ցոլանայր շունչն 'ի վեր, և ճախր
առեալ դառնայր անդրէն. և հրեշտակ
մի կացեալ 'ի սնարսն հովանի ունէր
նմա թեօքն», սարսափած, թուլցած,
հազիւ կրցաւ շիտակ վար իջնել, և տե-
տածը պատմել կնոջն. իսկ այն այլան-
դակ այլափոխ սիրտն՝ այլ աւելի կատ-
ղած՝ նորէն ստիպեց, կանացի և գիւա-
ցի շողոքով բողբօլ, սիրով ու սաս-
տով որ ուրիշ բան չմտածէ միայն ըս-
պաննէ: Արկորդ անգամ այլ ելաւ
թշուառ ու վատ մարդն, բայց և առա-
ջինէն աւելի սոսկացած սահմուկած՝
ահաւոր բաներ տեսնելով՝ ծառէն վար
ընկաւ քան թէ իջաւ: Այն ատեն
հերաւուկ ջատուկն որ իր առջի բնու-

թենէն բոլորովին դուրս ելած էր, վատ
և անարի կանչելով մարդուն, թեկը
սոթտելով, առաւ սուրբ. և այն խա-
բող սատանային հետ սողոսկելով ծառն
'ի վեր՝ հասաւ հրաշունչ հրէշի մը պէս
անմնաս և անղբաղ որսոյն վրայ, և այն
վեմա տաճարաձև գլուխը վերցնող
սեան (վզին) իջուց անիծեալ հարուա-
ծը... այնքան շուտ և շիտակ, մինչև
քնացողն մէկ ցնցմամբ արթնցաւ յա-
ւիտենականութեան մէջ. և անկէ
տեսնելով իր Սոգան ոստոց և հովոց
մէջ թողած մարմնոյն արիւնթաթա-
կերպարանքը՝ կանչեց հոգւով. «Տէր,
քո է վրէժխնդրութիւն և արդար ի-
րաւունք», ինչպէս որ տեսիլքով յայտ-
նուեցաւ այս՝ իսկ կամ՝ իոյ անուամբ
սրբակեաց ճգնաւորի մը, որ այն տեղի
մօտ Սիոն լեւան վանաց մէջ կ'աղ-
թէր:.....

Այն օրուան հոգն իբրեւ փախելով
և ամաչելով՝ իջաւ բարձրաւանդակ
հանգստարաններէն, երեկոյեան հո-
վանիներուն հետ խառնուելու, որոյ
զովութիւնը առնելով եպիսկոպոսին
սպասաւորքն՝ եկան վրանը վերցնելու...
փուշ զարմացք, սոսկումն առաւ զի-
րենք՝ երբ փայտեղէն մահճէն դեռ
կաթկըթած արիւնը տեսան, և ա-
տուածակերպ տէրերնին՝ աւազակի պէս
սրախողխող... Զերկընցնէնք. մե-
ռածէն աւելի իրենք մահացեալ վերու-
ցին մեծահոգի անձին մարմինը, և հա-
նեցին Սիոնի վանքը, ուր լալով և ող-
բով եկան՝ իսկ և իր միանձուներ. բայց
մօտի Աբիալան գեղին բնակիչքն այլ
լսելով իրենց գեղջաւագին հետ եկան
և աղաչելով պաշտօնէից՝ իրենց գեղը
իջեցնել տուին մարմինը, և հանգուցին
հոն Ս. Քրիստափորի նուիրեալ մատ-
րան մը մէջ առ ժամանակ մի: Բայց
պժգալի գոյժն գեղէ գեղ, քաղաքէ քա-
ղաք տարածեցաւ, անոր հետ իոյ ճգնա-
ւորին տեսիլքն այլ որ սոսկալի պատու-
հաս մը կու սպաննայր բոլոր այն սահ-
մաններուն. և չուշացաւ այլ պատիժն,
ըստ պատմելին, ահաւոր ժաժ և սասա-
նութիւն եղաւ քաղաքուն օր բոլոր դա-

ւառին մէջ, շատ լեռներ փլան և գետիններ բարձրացան, շատ աղբիւրներ յամբեցան և յամաք տեղուանք աղբիւրացան, ծովին ու փոշին ամպի պէս կուտարածուէր, և բոլոր բնութիւնն իսուգ երևէր. տասն հազար հոգիէ աւելի համրուեցան շէնքերու տակ և գետնին պատառուածոյ մէջ մնայող մեռնողքն, անծանօթներէն զատ: Այս կէս բնական և կէս բանական պատուհասին հետ՝ բնակչաց վախն և յետնոյ աւանդութիւնն խառնուելով, ըսին թէ ժաժին և մշուշին ատեն ողբոյ ձայներ այլ լսուէին, իբր թէ Վայ չոր, Վայ չոր կանչելով, և անկէ՝ Աղեգեաց ձորն ըսուեցաւ Սայոց ձոր. սակայն այս անունս անկէ հարիւրաւոր տարի առաջ այլ կու լսուէր: — Քառասուն օրէն ետև դարեցաւ ժաժին ու մշուշն, և ամէն կողմէ եկան երկրին աւերմունքը թողլով՝ նախ անոր հոգեւոր տիրոջ արժանաւոր հանգիստ մը տալու, և եպիսկոպոսաց քահանայից վանականաց և ժողովրդեան բազմութիւնը բաւական չլսեպելով, զկաթողիկոսն այլ կանչեցին. և յետ բազմօրեայ գիշեր ցորեկ աղօթից և պաշտամանց՝ աշխարհահանգէս յուղարկաւորութեամբ վերուցին մարմինը յԱրկազան գիւղէն, և Արբայ գետոյն դիմացի կողմը անցնելով հանեցին բարձրաւանդակ տեղ մը լեռան ստորոտին վրայ, կանաչաբոլոր միայնութեան մը, այսինքն անտառի մը մէջ, ուր շատ հին ատենէ վեր, և յառաջ իսկ քան զԱռսաւորչայ ժամանակն՝ առաքելոց քարոզութեանը հետևող հին քրիստոնեայք Սիւնեցիք եկեղեցի մը շինեցին ի դարուն մէջ ի պատիւ Ս. Ստեփաննոսի. որոյ քով բոլորեցին հոգեսէր անձինք իրենց միայնանոցը, և խստակրօն ճգնութեամբ կ'ապրէին, գիշեր ցորեկ աղօթելով, և կերակրի համար ոչ միայն մսեղինէ և կ'թեղինէ հրաժարելով՝ այլ և ամենայն տաք բանէ, և թանիկն անգամ թողլով, անոր համար կոչուեցան Թանակաբ, և տեղն՝ Թանահատի վանք. ահա հոս բերին հանգուցին Սիւնեաց իմաստասէր մէտ-

րապօլտին մարմինը, և վրան պղտիկ մատու մը կանգնեցին. զոր յետ շատ ժամանակի, յամին 1278-9 քակելով մեծ ու քարակոփ գմբեթաւոր եկեղեցի մը շինեցին, և հիման տակ թաղեցին մարմինը իր տապանաւն: Այս եկեղեցին ինչուան հիմա կանգուն կեցած է. և հիւսիսային կողմը որմնակից ունի փղորիկ քարաշէն մատուռ մը. տեղոյն բընակիչք կարծեն թէ հոն ըլլայ Ստեփաննոսի գերեզմանն, բայց պատմութիւնն դեռ եկեղեցւոյն հիման տակ կու ճանաչէ այն եկեղեցազարդ գրուիւր:

Իսկ ինչ եղաւ, ո՞ր կորաւ այնպիսի զլնոյ դահիճն, հայ հերովդիադայն. արդեօք ժաժին ատեն պատառուած գետնին անդնդոյ մէջ ընկղմեցաւ, թէ տարերքներէն աւելի տրտմած ու սրտմըտած մարդկանց արգար վրիժուք պատառ պատառ կտրատեցաւ... Ստեփաննոս Ստուծոյ արդարութեան և ողորմութեանը յանձներ էր իր սպանիչը, և իր նախանուն նախօրինակ նախաձեռնեց հետ ըսեր էր, «Տէր, մի համարիր զայդ դմա՝ ի մեղս», — յողովուրդն վախցաւ Ստուծոյ դատաստանը յափրշտակէն. բնութիւն պատկառեց իր արարչին կամքէն. իսկ այն որ Ստուծէ գթութեան՝ կակղացուց խստացեալ այլանդակեալ սիրտը. և այն սեղեխ հերատուկ հերովդիադայն՝ դարձուց յապաշխարող մը: Նանցաւ կինն՝ իր կարծածէն վեր ըրած չարիքը, և ինքզինքը դատապարտելով զգեստները պտուտելով քարերով կու ծեծէր կուրծքը. և այն անպարտ արեան տեղ՝ իր յիմարած արիւնը թափելով, ինքն իր սոսկալի չարիքը և խայտառակութիւնը կու պատմէր, կ'ողբար, կու բողբէր, իրաւունք և պատիժ կ'ուզէր. և տեսնելով որ իրեն մեծագոյն պատիժ է մարդկանցմէ այլ պատիժ չգտնէն, գընաց Թանահատի վանքը արեւմտեան կողմէն պատող ձորակի մը դիմաց, և հոն գետինը փորելով՝ ինչուան ի կուրծքը, կենդանի գերեզմանի մը մէջ մը-

տաւ, և իբրեւ անյոյս մեռեալ մը ա-
մառ ձմեռ, գիշեր ցորեկ կ'ողբայր կու-
լայր, թողութիւն կու ինգրէր մեղացն-
մինչև ամենուն գութն այլ շարժեցաւ,
և աղօթք հրամայուեցաւ անոր հա-
մար. և թողութեան ձայնն ելաւ ի գե-
րեզմանէ սպանելոյն, « Սողեալ լիցին
քեզ մեղք քո, ո՛վ կին դու », զոր և
սուրբ պատարագի ժամ ամէնքն լե-
ցին, և թողութիւն աւետեցին կնոջն :
Բայց նա թէ և չնորհակալեցաւ Բը-
տուծոյ, բայց դեռ զինքը անարժան
սեպելով ուրիշ կերպ ապրելու, ուզեց
և մնաց միշտ նոյն կենդանաթաղ գրին
մէջ. և հոն հանդարտ արտասուքով
կնքեց ապաշխարող կեանքը, հոն այլ
թաղուեցաւ, իր զոհած բարեխօսին
դիմաց. որ կու թուի դեռ իր վսեմա-
կան ձայնը կամ հառաչանքը լսեցնել
այն հին և սրբազան թաքնութեան և
միայնութեան խորէն : ...

Բայլ ո՞ր է իրեն արժանաւոր խօս-
նակ մ'այլ, որ իր ցաւալի մահը տղեր-
գէր մեզի : Ո՛ր էր այն մովսիսանը
ման () ընտելութեամբ երգողին հոգեկցորդ
քոյրն, Սարիամ, որ նոյն և նման եր-
գերը կրկնէր : — Եթանձելի բաղդ,
կրնամ ըսել թէ և անակնունքի, և
պանծալի փառք հայրենեաց մերոյ. մեր
օրհներգու դիտապետն, Ստեփաննոս,
ուներ իր մարեմանման թմբկուհին,
մեր եկեղեցւոյ սրբազան սիբիլլայն, յի-
սուսասէր Սափփոյն, հարազատ քոյրն,
ՍԱՀԱԿԴՈՒԽՅՈՒՄՅԱՆ. որ արեան հետ անոր
հոգւոյն նրբութեան և ախորժակաց
այլ ժառանգակից էր : Սահակադուխտ
այլ հմուտ երաժիշտ և երգահան էր,
և հրեշտականման եղանակաւոր. փա-
փուկ և սպիտակ հասակը կուսու-
թեամբ և հաւատաւորի պարկեշտ ձե-
ւովը պսակած, արդարեւ մենասէր յա-
ւերժահարսին նման, թողուց հեռա-
ցաւ յաշխարհէ, միայն իր ընտանեաց
սեփական տուրքը՝ հոգեխօս քնարն ա-
ռաւ հետը. և մէկ հատիկ արժանաւոր
միայնութեան տեղ ընտրեց հոն, ուր
իրմէ 400 տարի առաջ, Հայոց օրիոր-

դաց պարագլուխն, նրբասիրտն նրբա-
զգածն, նազելեաց նախատիպն, մեղա-
մաղձիկն և մենասէր, թագապսակ և
սրբապսակն ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՅԱՆ իր հըս-
կայ թագաւոր եղբօր (Տրդատայ) ձեռ-
քով կանգնէր էր իր սքանչելի օդա-
սրահ Հոլանդի, Վառնոյ ձորոյն սինա-
սար պասալդեայ բնաշէն բլրոց վրայ,
որք խորանդունդ վճերու և բազմածոց
ձորակներու վրայ նային, և մեր դա-
րուս հմուտ բնաքնիններն այլ սքանչա-
ցուցին : Բայն Վառնոյ ձորակին ծա-
ծուկ ծոցերուն մէջ՝ գտաւ այրասիրտն,
մանաւանդ թէ հրեշտակասիրտն Սա-
հակադուխտ, անզաղ քարայր մը, և
հոն անցուց կեանքը, հիանալի բնու-
թեան տեսարանաց մէջ՝ հիանալի եր-
գովքօրհներով բնութեան հէրը : Բայց
այն աննման քնարին և մեղրաշունչ
բերանոյն ձայներն շատ զօրաւոր էին
իր միայնութեան դէմ կուռելու. երգ
և լուծիւն չէն կրնար միաբանիլ.
այրէ այր, քարէ քար համբաւն հնչեց,
կարծուեցաւ թէ Հայոց եկեղեցւոյն
երգահան հոգին, մարեմքոյն մուսայն՝
մարմնացեալ իջեր է Տրդատայ և Խոս-
րովիդիստոյ սիրական սորերուն մէջ. աշ-
խարհիկ ու եկեղեցական կու գային ոչ
լսելու և զմայլելու միայն, այլ և աշ-
կերտելու և սովորելու նոր եղանակներ :
Հարկ եղաւ որ մեր մուսայն այլ իր
աստուածաշնորհ պաշտօնը կատարէ.
և առանց իր կուսական ու նուիրական
չնորհաց նուագութիւն մը բերելու,
մենարանին մօտից առջև վայրագոյր մը
ձգելով, ինքն ետեւնստած՝ կ'երգէր և
կու սովորեցնէր : Շատ բարակ և բազ-
մաեղանակ երգեր շինեց, զոր մեր երա-
ժիշտքն Մանրոսմանէ կ'անուանեն և
առանձնաբար կ'ըսէին և Մեղեդիք. ու-
րոց գոնէ մէկ մասն անշուշտ գտուի աշ-
սօր այլ այդ Մանրոսմանը և կ'ըսէին
զրոյց մէջ, թէ և մեք չգիտեմք թէ ո՞րն
է յատուկ իրեն, ո՞րն իր եղբօրն և ո՞րն
օտարաց. միայն հաւանիմք թէ շատն
առջի երկուքին են, քեռն և եղբօրն,
Ստեփաննոսի և Սահակադուխտի. այն
երգոց մէկն այլ, ինչպէս կ'իմացնէ մե-

զի պատմին, Սահակիստոյ անունը
կու յայտնէր, տնազուլի գրերովն, և
կու սկսէր Սրբոհի Մարիամ: յաւան-
նակն, ո՛հ, այն ժանեոր ժամանակն,
մեզի չհասուց այդ կցուրդդ այլ. բայց
անշուշտ չկրցաւ այլ բոլորովին անհետ

աննշան ընել, և թողուց առաջին տը-
նը. զոր և շատ հեղ հիմայ ըստ յար-
մարութեան վայելուչ իմաստիցն՝ եր-
գեմք առաջի Սրբութեան Սրբու-
թեանց:

Սրբուհի Սարիամ, սափոր ոսկի, և տապանակ կտակարանաց,
որ զի վերուստ զհացըն կենաց՝ պարգեւեցեր քաղցեալ բնութեանս
Լ. նա միշտ բարեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց:

Իր քերդող եղբօրը եղերական վախ-
ճանին առեն՝ արդեօք ո՞ղջ էր քերդո-
ղուհի քոյրն, և լսելով սրտահար սըր-
տաբեկ գոյժը՝ քարայրին անկիւնէն
սոսկալով առաջ եկաւ, և անդարման
ցաւուն յետին մխիթարանք առնելով իր
հոգեխօս բամբիւր, վերջին անգամ
անոր ամենէն քաղցր և ամենէն ողբա-
կան ձայները իր սրտին փափկագոյն
զգացմանց հետ՝ հանեց հնչեց, և իբրեւ
այլօրինակ Վերսիլա՝ փոխանակ օրհ-
նելու այն այլանման տիրասպան Յայե-
լին ձեռքերը, նզովեց հերատուկ չարա-
զէն կնոջ աջը, և իբրեւ մայրն Սիսարայ
զրկուած իր սիրելւոյն այցելութենէն,
փոխանակ բարձր ձողերու և գաւա-

զաններու վրայ կանգուն դիտելու՝ գետ-
նամած տեսնելով անոր եպիսկոպոսա-
կան և արքայական վառերը և դրօշնե-
րը, որք և արիւնովը թաթաւած՝ կու
յիշեցընէին նոր և կսկծալի կերպով մը
“զկապուտ երանգոյն գունագոյն նկա-
րուց, նարօտ պէսպէս նկարուց. այն էր
պարանոցին նորա կապուտ”, և հաւա-
չեց իբրեւ հարազատ քոյր անեղբայր,
բայց Սահակիստոյ և Ստեփաննոսի
արժանավայել հառաչանօք. և ապա իր
երկայն սեաւ վարագուրովն՝ քնարն այլ
դէմքն այլ պատելով, ծածկուեցաւ բո-
լորովին մարդկանց տեսութենէն ի
խորսքարայրին... Պատմութիւնն լռէ:

Հ. Ղ. Մ. Ա.

Ովկիանոս:

“Ո՛ր էիր յորժամ փակեցի զծով
ղրամբք, յորժամ ծնաւ յորովայնէ
մօր իւրոյ ելանել: Եղի նմա զմէք ի
հանդերձ, և զմառախուղ նմա ի խան-
ձարուրս: Եղի նմա սահմանս, եղեալ
փականս և դրունս. ասացի, ցայդ վայր
եկեացես՝ և այլ մի անցանիցես, այլ
անդրէն ի քեզ խորտակեացին ալիք
քո՛ւ”:

Տէր, ի՞նչ պատասխան տամ քեզի.
քու խօսքդ կու խռովէ կու շփոթէ
զիս: Ո՛հ, պէտք է որ ես այլ խորտա-
կեմ հոս իմ հպարտութիւնս: Ո՛հ Լ.՝
տուած իմ, մինչդեռ քու ձեռքդ կու տա-

րածէր այն լայն անապատները, և կու
կապկըպէր այն խայտացող ալիքները, ես
ոչինչ էի. միլիոնաւոր օրեր անցեր էին ա-
նոնց վրայէն, և ես գեռ ոչինչ էի: Եւ
հիմա այլ, որ պայծառ արեւը քու և ծո-
վուն առջև կու լուսաւորէ իմ ափշած
աչքերս և իմ դողդղուն քայլերս, հի-
մա այլ ի՞նչ եմ ես: Լ. յս անչափու-
թեանս առջև ի՞նչ եմ ես. աւազի հատ
մը ծովեզերքի աւազին վրայաւելցուած,
և գրեթէ ոչինչ՝ յորմէ ստեղծեցիր
զիս: Եւ թէ որ մոռնար Ովկիանոս այն
սրտառէրը՝ զոր տուիր իրեն օր մը, ի՞նչ
պիտի ըլլայի ես, ի՞նչ պիտի ըլլային քա-
ղաքներ և ժողովուրդք: Պէտք է որ ես
այլ յիշեմ այն խօսքը, որ չըլլայ թէ
մեռնիմ վախէս այն սպառնացող ալիք-
ները տեսնելով: